ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի հայցորդ

ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավաստեղծ գործունեության հասկացությունը և դրա էությունը, առանձնահատկությունները, ինչպես նաև՝ դերն ու նշանակությունը իրավական կարգավորման ոլորտում:

Հոդվածում տրված է իրավաստեղծ գործունեության հեղինակային սահմանումը, ըստ որի՝ իրավաստեղծ գործունեությունը պետության իրավասու մարմնի ստեղծագործական աշխատանք է, որի շնորհիվ ընդունվում, փոփոխվում և վերացվում է նորմատիվ իրավական ակտը:

Հիմնաբառեր- *Իրավական կարգավորում, իրավաստեղծ գործունեություն, իրավունքի աղբյուր, նորմատիվ իրավական ակտ, օրենսդրություն:*

Հասարակական կյանքը կարգավորվում, կանոնավորվում է սոցիալ-նորմատիվային մեխանիզմների՝ սոցիալական նորմերի և սոցիալական վերահսկողության միջոցով: Այդ մեխանիզմներում գլխավոր դերը կատարում է իրավունքը:

Իրավունքը և այլ սոցիալական նորմերը (բարոյական, կրոնական, կորպորատիվ և այլն) այն հիմնական ձևերն ու միջոցներն են, որոնց օգնությամբ իրականացվում է մարդկանց վարքագծի կանոնակարգումը հասարակությունում: «Դրանք իրենց խտացված ձևով արտահայտում են ցանկացած հասարակության օբյեկտիվ պահանջը՝ կանոնակարգելու նրա անդամների գործողություններն ու փոխհարաբերությունները, նրանց վարքագիծը ենթարկելով սոցիալական անհրաժեշտ կանոններին»[1]: Դրանով սոցիալական նորմերը հանդես են գալիս որպես սոցիալական հանրության կողմից կարևորագույն լծակ՝ գիտակցաբար և նպատակաուղղված ազդելու մարդկանց կենսագործունեության վրա:

Իրավունքը և իրավական կարգավորումը՝ հասարակական հարաբերությունների սոցիալական կանոնակարգման հիմնական միջոցներ են: Իրավական կարգավորումն ապահովում է հասարակության բնականոն կենսագործունեությունը և նրա առաջընթաց զարգացումը: Իրավունքը համակարգված, բազմաբնույթ երևույթ է, որն ապահովում է հասարակության ինքնազարգացումը[2]: Իրավունքն արտահայտում է հասարակական գիտակցության էական առանձնահատկությունները, մարդկանց վարքագծի բնութագրիչ կողմերը կոնկրետ պատմական ժամանակաշրջանում:

Սակայն, իրավունքը որքան էլ անհրաժեշտ և կարևորագույն սոցիալական նորմատիվ կարգավորիչ է հասարակական կյանքում, այն ինքնաբերաբար չի ծնվում, առաջանում նրա «ծնունդը» արդյունք է մարդկային որոշակի ինտելեկտուալ, ստեղծագործական աշխատանքի:

Պետականորեն կազմավորված հասարակությունում օրենքները և ենթաօրենսդրական ակտերը ընդունվում, փոփոխվում և վերացվում են պետության իրավաստեղծ գործունեության միջոցով: Դրանք մարդկային գիտակցության ընդհանրապես, իրավագիտակցության, մասնավորապես, մարդկանց նպատակաուղղված գործունեության արդյունք են: Միևնույն ժամանակ, իրավական կարգավորման հարցերի լուծման ընթացքում իրավաստեղծ մարմինները կարող են կամայական, հասարակական պահանջմունքներին ոչ համարժեք իրավական որոշումներ ընդունել՝ դրանց տալով համապարտադիր վարքագծի նորմերի նշանակություն: Նման «օրինաստեղծ» կամայականություններից խուսափելու համար անհրաժեշտ է, որ իրավաստեղծ մարմինները հաշվի առնեն բազմաթիվ գործոններ, որոնք մեծ չափով կանխորոշում են ապագա նորմատիվ-իրավական ակտերի էությունն ու բովանդակությունը: Հետևաբար, իրավական պետության օրենսդրական համակարգի ձևավորումը և օրենսդրության կատարելագործումն անհնար է առանց իրավաստեղծ գործունեության տեսական և մեթոդական հիմունքների մշակման: Դա ակնհայտ է դառնում, եթե հաշվի առնենք, որ գիտականորեն չհիմնավորված, հասարակության պահանջմունքները ոչ լիարժեք արտահայտող օրենքը կամ ենթաօրենսդրական ակտը չի կարող տալ կանխատեսվող դրական սոցիալական արդյունք: Ավելին, այդպիսի ակտերի պահանջների իրագործումը հաճախ բերում է անկանխատե-

սելի բացասական հետևանքների:

Ընդհանրապես, իրավաստեղծ գործունեությունը ցանկացած պետության աշխատանքի կազմակերպման ձևերից մեկն է: Սոցիալական կառավարման հիմնական գործառույթներից է վարքագծի համընդհանուր կանոնների մշակումը և իրագործումը[3]:

Իրավաստեղծ գործունեության բովանդակությունը, բնույթը, նպատակն ու արդյունքները որոշարկվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ, նյութական և հոգևոր գործոններով: Բոլոր անհրաժեշտ գործոնների հաշվի առնելը և իմաստավորելը՝ դրանց փոխկապակցվածության և փոխներգործության ենթաշղթայում, այդ գործունեության հաջողության և արդյունավետության գրավականն է:

Պետության իրավաստեղծ գործունեությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման և հասարակական կյանքում մարդկանց վարքագծի կանոնակարգման օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

Իրավաստեղծ գործունեությունն ինչ ձևով էլ, որ այն գոյություն ունենա, «հասարակության ղեկավարման պետական ձև է»[4]:

Այդ աշխատանքն առանձնահատուկ ինտելեկտուալ գործունեություն է, որը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ և ունակություն, որոնք կապված են իրավական ակտեր ստեղծելու կամ դրանք փոփոխելու հետ: Ըստ իրավաստեղծ գործունեության արդյունքի, օրենքների և նորմատիվ-իրավական այլ ակտերի որակի՝ դատում են տվյալ պետության և հասարակության, նրանց ժողովրդավարության և քաղաքակրթության զարգացման աստիճանի մասին:

Իրավաբանական գրականության մեջ իրավաստեղծ գործունեության հասկացության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Այսպես, մի շարք հեղինակների կարծիքով իրավաստեղծ գործունեությունը հանդես է գալիս որպես իրավական ակտերում դասակարգի (ժողովրդի) կամքի արտահայտման և ամրագրման պարբերաբար ձևավորված ընթացակարգ[5]:

Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ իրավաստեղծ գործունեությունը լայն հասկացություն է, որն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների նորմատիվ իրավական կարգավորմանն ուղղված կազմակերպված, ձևավորված պետական գործունեություն և կոչված է բավարարելու հասարակության իրավական պահանջները[6]: Այս տեսակետներն այս կամ այն տարբերակով պահպանվել են նաև մեր ժամանակներում: Նորագույն գիտական աշխատություններում իրավաստեղծ գործունեությունն ընդգրկում է իրավական նորմի ստեղծման ողջ ընթացակարգը, սկսած գաղափարի ծագումից մինչև իրավական նորմի ընդունումն ու հրապարակումը[7]:

Ընդհանրացնելով գիտական մշակումները և իրավակիրառողական պրակտիկան, մեր կարծիքով, կարելի է տալ իրավաստեղծ գործունեության հետևյալ հասկացությունը. իրավաստեղծ գործունեությունը գիտականորեն հիմնավորված ստեղծագործական ընթացակարգ է, որն իրականացնում են պետական մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում և կոչված է բավարարելու հասարակության և պետության իրավական պահանջմունքները[8]:

Այդպիսի սահմանումը հնարավորություն է տալիս առանձնացնել մի քանի կարևոր հատկանիշներ.

1. հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի ճանաչումը, ուսումնասիրումը և վերլուծությունը, որտեղ պահանջվում է իրավական կանոնակարգում,

2. պետության իրավասու մարմնի որոշարկումը, որը պետք է ընդունի համապատասխան նորմատիվ իրավական ակտը,

3. ընդունվելիք նորմատիվ-իրավական ակտի ձևի որոշումը (օրենք, հրամանագիր, որոշում),

4. իրավական ակտի նախապատրաստումը, ընդունումը կամ նրա փոփոխումը համապատասխան ընթացակարգով:

Իրավաստեղծ գործունեությունը մեխանիկական գործընթաց չէ, այն իրենից ներկայացնում է գիտական, ստեղծագործական բարդ ընթացակարգ, որտեղ խաչաձևվում են անհատական, խմբային, հասարակական և պետական շահերը, նրանց պահանջմունքները, ինչպես նաև իրավաստեղծ լուծումների նորմատիվ բովանդակության վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոնները և այլն:

«Իրավաստեղծ», «օրինաստեղծ» բառերն ինքնին արտահայտում են նորմատիվ իրավական ակտերի ձևավորման ստեղծագործական բնույթը, որտեղ միահյուսվում են կեցության այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ սոցիալական շահերը, պահանջմունքները, կամային հատկանիշները, իրավական լուծման տարբերակները և այլն: Իրավաստեղծ գործընթացում չպետք է լինեն մեխանիկական կամ ավտոմատ լուծումներ, քանի որ միմիայն ստեղծագործական աշխատանքի շնորհիվ է հնարավոր բազմաթիվ լուծումներից ընտրել մեկը, որն առավել արտահայտի սոցիալական առումով օգտակարն ու անհրաժեշտը և դրան համարժեք իրավական

ձևը:

Այնուհետև, անհրաժեշտ է իմանալ և հաշվի առնել նաև նորմատիվ իրավական ակտերի գործողության դինամիկան, որը հանգում է հետևյալին.

ա) չի կարելի բացարձականեցնել ակտի ընդունման պարագան և միաժամանակ չապահովել նրա գործողության ոլորտը,

բ) վտանգավոր է բացահայտորեն թույլատրել իրավական հակադրությունները (կոլիզիաները),

գ) նորմատիվ ակտերի գերբեռնվածությունը նվազեցնում է նրանց արդյունավետ գործողությունը,

դ) չի կարելի նորմատիվ ակտն ընդունել մյուսներից մեկուսացված,

ե) անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել նորմատիվ ակտի ընդունման, փոփոխման կամ վերացման ժամանակը,

զ) նորմատիվ ակտը պետք է ունենա կոնկրետ հասցեատերեր,

է) անհրաժեշտ է կանխատեսել նորմատիվ ակտի գործողության հետևանքները,

ը) նորմատիվ ակտի բովանդակության խեղաթյուրված ըմբռնումը առաջացնում է իրավաբանական կոպիտ սխալներ,

թ) անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիների վերաբերմունքն ընդունվելիք նորմատիվ ակտի նկատմամբ,

ժ) չի կարելի անտեսել նորմատիվ ակտին բնորոշ որակական հատկանիշները[9]:

Իրավաստեղծ գործունեությունն ավելի ընդգրկուն գործընթացի՝ իրավակազմավորման վճռական և վերջնական փուլն է[10]:

Հեղինակներից ոմանք «իրավաստեղծ գործունեություն» հասկացությունն այնքան են «ընդարձակում», որ ներառում կամ նույնացնում են «իրավակազմավորման» հետ, որը, մեր կարծիքով, մեթոդաբանական սխալ մոտեցում է: Եվ, ինչպես իրավացիորեն նշում է իրավագիտության դոկտոր Վ.Վ. Ստեփանյանը. «...իրավակազմավորումը և իրավաստեղծ գործունեությունը տարբեր հասկացություններ են և դրանք չի կարելի նույնացնել»[11]:

Իրավակազմավորման գործընթացը ներառում է իրավունքի ձևավորման սկզբնական, ելակետային փուլից մինչև իրավական լուծման, այսինքն՝ նորմատիվ ակտի ընդունումը: Իրավակազմավորումը բովանդակում է իրավական կարգավորմանը ենթակա հասարակական հարաբերությունների գիտական ուսումնասիրությունը, հասարակական պահանջմունքների և շահերի բազմակողմանի և խորքային վերլուծությունը և գնահատումը, հասարակական կարծիքի հաշվի առնումը և այլն: Իրավակազմավորումը՝ պետական կամքի ձևավորման գործընթաց է նորմատիվ ակտում, իսկ իրավաստեղծ գործունեությունը ներառում է պետության իրավասու մարմինների կողմից նորմատիվ ակտերի մշակման և ընդունման գործընթացը[12]:

Այսպիսով, իրավաստեղծ գործունեությունն իրավակազմավորման հիմնական, վճռական և նրա տրամաբանական ավարտման գործընթացն է:

Իրավաստեղծությունը՝ որպես գործընթաց, միանգամից տեղի չի ունենում: Այդ գործընթացում առանձնացվում են մի շարք փուլեր, որոնցով անցնում է ակտի նախագիծը, որպեսզի ձեռք բերի իրավաբանական ուժ: Իրավաստեղծ գործընթացի փուլերն են՝ ակտի նախագծի քննարկման փուլը, ակտի նախագծի ընդունման փուլը, ընդունված ակտի ստորագրման ու հրապարակման փուլը:

Նախ, անդրադառնանք նորմատիվ իրավական ակտերի մշակմանը, որն օրենսդրական ակտերի պարագայում, որպես կանոն, ուղղորդվում է երկու փուլով.

1) քաղաքականության մշակում,

2) իրավական ակտի տեքստի կազմում:

Առաջին փուլն իրենից ներկայացնում է քաղաքական որոշման կայացման փուլ[13], որի ընթացքում անհրաժեշտ է որոշում կայացնել հետևյալ առանցքային հարցերի շուրջ.

- ո՞րն է լուծման ենթակա խնդրի էությունը, և որո՞նք են դրա լուծմանն ուղղված քաղաքականության նպատակները,
- ինչպիսի՞այլընտրանքներ են առկա խնդրի լուծման հարցում, և դրանցից ո՞րն է առավել նախընտրելին,
- արդյո՞ք խնդրի լուծման համար ընտրված քաղաքականությունն իրականացնելու միակ միջոցը նորմատիվ իրավական կարգավորումն է, թե՞ առկա են այլընտրանքային ուղիներ,
- ո՞ր պետական կամ տեղական ինքնակառավարման կամ օրենքով ստեղծված այլ մարմինը պետք է ստանձնի նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակումը,
- որո՞նք են լինելու իրական ակտի հայեցակարգային դրույթները,
- ինչպիսի՞ իրավական և վարչական կառուցակարգեր պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտը գործնականում կենսագործելու համար:

Երկրորդ փուլում համապատասխան պետական, տեղական ինքնակառավարման կամ օրենքով ստեղծված այլ մարմինը ձեռնամուխ է լինում նորմատիվ իրավական ակտի տեքստի մշակմանը՝ կենսագործելով քաղաքական որոշման արդյունք-

ները[14]:

Ընդ որում՝ առաջին փուլում որոշում կայացնողները կարող են տարբեր լինել երկրորդ փուլն իրագործողներից առաջին փուլում ներգրավվում են առավել բարձրաստիճան պաշտոնատար անձինք, որոնք քաղաքական որոշում կայացնելու իրավասություն ունեն (օրինակ՝ նախարար, փոխնախարար, վարչության պետ), իսկ երկրորդ փուլում՝ համապատասխան պետական, տեղական ինքնակառավարման կամ օրենքով ստեղծված այլ մարմնի ծառայողներ:

Այժմ տրամաբանական և համապարփակ կերպով ներկայացնենք օրինաստեղծ գործընթացը:

Օրենքի ընդունմանը նախորդող գործընթացի փուլերն են.

1) օրենքի հայեցակարգի մշակումը՝ ըստ անհրաժեշտության,

2) օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակումը,

3) Նախագիծը շրջանառության մեջ դնելը.

• Նախագիծը մշակող մարմնի կողմից նախագծի ներկայացում հանրապետական գործադիր մարմինների, պետական և օրենքով ստեղծված այլ մարմինների համաձայնեցմանը,

• Նախագիծը մշակող պետական կառավարման մարմնի կողմից նախագծի ներկայացում կարգավորման ազդեցության գնահատում իրականացնող նախարարություններին՝ ազդեցության գնահատում իրականացնելու և կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ ստանալու համար,

• Նախագիծը մշակող պետական կառավարման մարմնի կողմից նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպում և անցկացում,

4) Նախագծի ներկայացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության,

5) Նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ քննարկման համար, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից նախագծի ուղարկում նախագիծը մշակող մարմնին (լրամշակման անհրաժեշտության կամ սահմանված փաստաթղթերի բացակայության դեպքում),

6) Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացմանը,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Նախագծի ներկայացումը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով,

8) Օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից,

9) Ընդունված օրենքի ներկայացումը ՀՀ Նախագահի աշխատակազմ, օրենքի ստորագրումը և հրապարակումը ՀՀ Նախագահի կողմից:

Ծավալուն, հասարակական հարաբերությունների կարգավորման նոր մոտեցումներ նախատեսող կամ առավել կարևորություն ունեցող իրավական ակտերի նախագծերի մշակմանը նախորդում է իրավական կարգավորման քաղաքականության որոշումը կարգավորման հայեցակարգային մոտեցումների որոշակիացումը, որը տեղ է գտնում համապատասխան իրավական ակտի նախագծի հայեցակարգում, եթե այդպիսին մշակվում է: Հայեցակարգի մշակումը, հատկապես՝ ծավալուն նախագծերի պարագայում, բավական ժամանակատար և աշխատատար է, սակայն այն կարևոր երաշխիք է լավ կշռադատված օրինաստեղծ գործունեության իրականացման համար:

Հայեցակարգերը կարող են լինել մանրամասնեցման տարբեր աստիճանների: Որպես կանոն հայեցակարգում տրվում են՝

• կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրը,

• ապագա իրավական ակտի նպատակները,

• ապագա իրավական ակտի կարգավորման առարկան, իրավական ակտի նախնական կառուցվածքը և հիմնական դրույթները,

• ապագա իրավական ակտի ընդունման ժամկետները,

• ապագա իրավական ակտի մշակման պատասխանատու մարմինը,

• ապագա իրավական ակտում նախատեսվող նորմերի կիրարկման ենթադրվող հետևանքների վերլուծությունը:

Առաջին գլխում կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Իրավաստեղծագործությունը իրավասու հանրային մարմինների իրավական գործունեությունն է՝ ուղղված իրավական նորմերի ընդունմանը, փոփոխմանը և վերացմանը:

2. Իրավաստեղծագործությունը՝ որպես իրավական գործունեության տեսակ բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

ա) իրավաստեղծագործությունն ակտիվ, ստեղծագործական հանրային-պետական գործու-

նեություն է:

բ) Իրավաստեղծագործության արդյունքը նորմատիվ իրավական ակտերում կամ իրավունքի այլ աղբյուրներում, ակտերում մարմնավորված, ամրագրված իրավունքի նորմերն են:

3) Իրավաստեղծագործությունը հասարակության կառավարման կարևոր միջոց է, որով ձևավորվում է նրա զարգացման ստրատեգիան:

4) Իրավաստեղծագործության մակարդակը, որակը քաղաքակրթվածության, հասարակական զարգացած իրավական մշակույթի և ժողովրդավարության ցուցանիշ են:

5) Իրավաստեղծագործությունը՝ որպես հանրային իրավասու մարմինների իրավական գործունեություն՝ ուղղված իրավական նորմերի ընդունմանը, փոփոխմանը և վերացմանը, իրականացվում է որոշակի սկզբունքների հիման վրա՝ գիտականության, պրոֆեսիոնալիզմի, իրավական օրինականության, սոցիալական լեգիտիմության և ժողովրդավարության, հրապարակայնության:

---

[1] Տե՛ս, Нерсесянц В.С.Общая теория права и государства. М., 2015, С. 81.

[2] Տե՛ս, Еникеев М.И. Юридическая психология. Учебник для вузов. М., 2000, С. 20.

[3] Տե՛ս, Кудрявцев В.И., Казимирчик В.П. Современная социология права. М., 1995, С. 37, նաև՝ Правотворчество в СССР. М., 1974г., Теория государства и права. Курс лекций. Под ред. Н.И. Матузова и А.В.Малько. М., 1997г., стр. 368-397. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. Отв. ред. проф. М.Н.Марченко. М., 1998г., стр. 157-173, Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., 1997г., стр. 289-299. Վլադիմիր Նազարյան, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կոնցեպցիան», Երևան, 1992թ., Հովհաննես Ստեփանյան, «Հայաստանի Հանրապետության օրենսդրության համակարգումը», Երևան, 1995թ.:

[4] Տե՛ս, Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под ред. В.С.Нерсесянца, М., 1999г., С. 307.

[5] Մանրամասն տե՛ս Ковачев Д.А. Механизм правотворчества в социалистическом государстве. М., 1977г., Правотворчество в СССР, М., 1974г.

[6] Մանրամասն տե՛ս, Научные основы советского правотворчества, М., 1981г., С. 16-22.

[7] Մանրամասն տե՛ս, Поленина С.В. Законотворчество в Российской Федерации. М., 1996г.

[8] Համանման սահմանումներ տես նաև՝ Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. Отв. ред, проф. М.Н. Марченко. М., 1998г., С. 157; Тихомиров Ю.А., Котелевская И.В. Правовые акты. Учебно-практическое и справочное пособие. М., 1999г., С. 33.

[9] Մանրամասն տե՛ս Тихомиров Ю.А., Котелевская И.В. Правовые акты. Учебно-практическое и справочное пособие. М., 1999, С. 35.

[10] Իրավակազմավորման մասին մանրամասն տե՛ս, Степанян В.В. Теоретические проблемы правообразования в социалистическом обществе. Ереван, 1986:

[11] Տե՛ս, Степанян В.В. Теоретические проблемы правообразования в социалистическом обществе. Ереван, 1986, С. 29:

[12] Մանրամասն տե՛ս, Степанян В.В. Теоретические проблемы правообразования в социалистическом обществе, С. 29-30; Проблемы общей теории права и государства. Учебник для вузов.,М., 1999, С. 309.

[13] Տե՛ս, Синюков С. В. Механизм правотворчества: дис… канд. юрид. наук. Саратов, 2013, С. 61-62.

[14] Տե՛ս, МазуренкоА. П. Правотворческая политика как фактор модернизации правотворчества в России: дис.: д-ра юрид. наук. Саратов, 2011, С. 117-118.

Лилит Мурадян
Соискатель отдела государственно-правовых
исследований института философии,
социологии и права НАН РА

Резюме

Концепция, суть и значение законотворческой деятельности

В статье подробно обсуждается понятие и суть законотворчества, особенности, а также ее роль и значение в области правового регулирования.

В статье описывается авторское определение правоохранительной деятельности, в соответствии с которой законотворческая деятельность является творческой деятельностью компетентного органа государства. Благодаря этой деятельности принимается, изменяется и отменяется нормативный правовой акт.

Ключевые слова: *правовое регулирование, законотворческая деятельность, источник права, нормативный правовой акт, законодательство.*

Lilit Muradyan
Applicant to National Academy of
Sciences of the Republic of Armenia,
Institute Philosophy, Sociology and Law,
Departmen of State and Legal Studies

SUMMARY

The concept, essence and significance of lawmaking activities

The article examines the concept of lawmaking and its essence, peculiarities, as well as its role and significance in the field of legal regulation.

The article specifies the authoritative definition of the law-making activity, according to which the law-making activity is the creative work of the competent authority of the state, due to which the normative legal act is adopted, changed and eliminated.

Key words: *Legal regulation, law making activity, source of law, normative legal act, legislation.*